# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2020թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/77**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Թադևոսյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 278.110.1023103),

«ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Վ. Թադևոսյանի (լիազորագիր տրված՝ 18.08.2020թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կոշիկի ներդիրների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 18.08.2020թ. ներկայացված (19.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/77 բողոք), պարզեցի հետևյալը.

**1. <u>«ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.08.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. *<u>Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>*

1.1 ՀՀ պաշտպանության նախարարությունը 27/07/2020թ. կոշիկի ներդիրների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային գնումների Armeps համակարգում հրապարակել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

1.2 Նշված հայտարարության համաձայն «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գնման ընթացակարգին մասնակցելու էլեկտրոնային հայտ, դրան կցելով հայտի ապահովման փաստաթղթի լուսապատճենը:

1.3 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ /արձանագրություն թիվ 3, կետ՝ 2.2/ մերժվել է «Ռալյֆ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հայտի ապահովման բնօրինակը ուշ ներկայացնելու պատճառով:

*<u>Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները</u>.*

ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ: Նշված պահանջը սահմանված է եղել նաև Ընթացակարգի հրավերով:

Էլեկտրոնային գնումների Armeps համակարգում (նաև գնումների պաշտոնական տեղեկագրում) հրապարակված Ընթացակարգի հայտարարության և հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը հանդիսացել է 04/08/2020թ. Ժամը 11:30-ը:

«ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով ներկայացրել է հայտ, սակայն հայտը նշված համակարգում տեսանելի է եղել միայն 05/08/2020թ., ինչը պայմանավորված է եղել էլեկտրոնային գնումների Armeps համակարգում առաջացած խնդիրների պատճառով:

Այսինքն, համակարգում առաջացած խնդիրների պատճառով, ինչն արձանագրված է նաև Հանձնաժողովի նիստի N 3 արձանագրության մեջ /կցվում է/, հայտերի բացումը հնարավոր չի եղել իրականացնել 04/08/2020թ. ժամը 11:30-ին, ինչով պայմանավորված հայտերը տեսանելի չեն եղել և տվյալ դեպքում «Ռալյֆ գրուպ» ՍՊԸ-ն հավաստիացել է, որ ինքը հանդիսացել է Ընթացակարգի մասնակից միայն 05/08/2020թ./ երբ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում տեսանելի են եղել, թե ովքեր են հայտ ներկայացրել և ըստ այդմ հադիսացել մասնակիցներ/: Ընդ որում Հանձնաժողովի նիստի N 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հայտերի ներկայացման փուլը պահպանվել է մինչև 05/08/2020թ., իսկ 06/08/2020թ. դրությամբ հնարավոր չի եղել իրականացնել հայտերի բացումը:

Հարկ ենք համարում նշել, որ Հանձնաժողովի նիստի N 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 07/08/2020թ. ներկայացված գրության /ՀՀ պաշտպանության նախարարությունը գնահատող հանձնաժողովի նիստը կասեցրել է 06/08/2020թ../, ՀՀ ֆինանսների նախարարությունը 11/08/2020թ. գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում հնարավոր չէ իրականացնել հայտերի բացումն ու գնահատումը և առաջարկել է գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով:

Արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարությունը անտեսել է այն հանգամանքը, որ հայտերի բացումը փաստացի տեղի չի ունեցել նույնիսկ 05/08/2020թ-ին և մերժել է «Ռալյֆ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ պատճառաբանելով, որ «Ռալյֆ գրուպ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման բնօրինակը պետք է ներկայացվեր մինչև 05/08/2020թ. ժամը 17:00-ն, այն դեպքում երբ, բոլորի համար /այդ թվում նաև ՀՀ պաշտպանության նախարարության և մասնակիցների/ տեսանելի է եղել, թե ովքեր են հանդիսացել Ընթացակարգի մասնակից միայն 05/08/2020թ.-ին:

Քանի որ «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության Ընթացակարգի մասնակից լինելու հանգամանքը պարզել է դարձել /այդ թվում նաև ՀՀ պաշտպանության

նախարարության համար/ միայն 05/08/2020թ.-ին, «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտի ապահովման բնօրինակը ներկայացրել է 06/08/2020թ. մինչև ժամը 17:00-ն և չի խախտել Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջը:

Հատկանշական է, որ եթե նույնիսկ մի պահ համարենք, որ «Ռալյֆ գրուպ» ՍՊ ընկերության կողմից հայտի ապահովման բնօրինակը ներկայացվել է ժամկետից ուշ, ապա այն կարող համարվել էական, քանի որ նման դեպքերում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլկազմակերպություններիհամար խոչընդոտներ չեն ստեղծվել: Այսինքն, այստեղից հետևում է, որ դիմող ընկերության նկատմամբ խտրական վերաբերմունք է ցուցաբերվում, ինչը անընդունելի է և հղի այլ իրավական հետևանքներով»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է .

1. պարտավորեցնել Հանձնաժողովին՝ չեղյալ համարելու «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը:

2. պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ շարունակելու գնման գործընթացը «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության մասնակցությամբ:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշմամբ /արձանագրություն թիվ 3, կետ՝ 2.2/ մերժվել է «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հայտի ապահովման բնօրինակը ուշ ներկայացնելու պատճառով:

18.08.2020թ-ին «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտի ընդունումը մերժելու որոշման դեմ ներկայացվել է բողոք՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Բողոքի քննության համար ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 27.08.2020թ-ին հրավիրվել է նիստ:

Նիստի ընթացքում բողքաբերի ներկայացուցչիս կողմից բանավոր ներկայացվել է լրացուցիչ փաստական հիմքեր, որոնք ներկայացվում են նաև սույն բողոքի լրացմամբ:

*Լրացումը կայանում է հետևյալում*.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27/07/2020թ. կոշիկի ներդիրների

ձեռքբերման նպատակով էլեկտրոնային գնումների Armeps համակարգում (նաև գնումների պաշտոնական տեղեկագրում) հրապարակել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտարարությունը և հրավերը:

Էլեկտրոնային գնումների Armeps համակարգում (նաև գնումների պաշտոնական տեղեկագրում) հրապարակված Ընթացակարգի հայտարարության և հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը հանդիսացել է 04/08/2020թ. ժամը 11:30-ը:

Նշված հայտարարության համաձայն «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 04/08/2020թ-ին ներկայացվել է գնման ընթացակարգին մասնակցելու էլեկտրոնային հայտ, դրան կցելով հայտի ապահովման փաստաթղթի լուսապատճենը:

Այնուհետև, նույն օրը էլեկտրոնային գնումների Armeps համակարգը տեխնիկական խափաբումների պատճառով չի գործել, եղել է անհասանելի, իսկ ստուգելու համար թե, արդյոք համակարգում ներբեռնվել են «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը, թե ոչ, Ընկերությանը տեսանելի և հասանելի չի եղել, իսկ փաստաթղթերի ներբեռնման մասին հետադարձ ծանուցումից պարզ չի եղել փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներբեռնվել է, թե ոչ:

Նման պայմաններում, մտածելով, որ հնարավոր է, որ տեղի է ունենում փաստաթղթերի ճշգրտման գործընթաց՝ «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից հայտի ապահովման փաստաթղթի բնօրինակը ներկայացվել է ավելի ուշ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

**2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.08.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/2640-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 21.08.20թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/12544-2020 գրության՝ ուսումնասիրելով «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով գնման ընթացակարգին հրավերով սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել նաև «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը (հետայսու նաև՝ Մասնակից):

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 04.08.2020թ.: Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»: Մասնակիցը հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիքի արտատպված (սկանավորված) տարբերակը, սակայն մինչև 05.08.2020թ. Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է Մասնակցի հայտը:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ն մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով, իսկ հայտերի ներկայացման վերջնաժամկետը ինչպես Ընթացակարգի հրավերով, այնպես էլ էլեկտորնային գնումների armeps.am համակարգում (նաև պաշտոնական տեղեկագրում) սահմանված է եղել 04.08.2020թ., ուստի Մասնակցի համար որպես բանկային երաշխիքի բնօրինակը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնելու

վերջնաժամկետ պետք է հանդիսանար հայտերի ներկայացման համար Ընթացակարգի հրավերով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրվա (05.08.2020թ.) ժամը 17:00-ն: Մասնակցի կողմից ներկայացված այն փաստարկները, թե երբ են հայտերը տեսանելի եղել armeps.am/ppcm համակարգի հայտեր դաշտում, առաջացել են տեխնիկական խնդիրներ, հայտերի բացումը փաստացի չի իրականացվել, որևէ առնչություն չունեն այն փաստի հետ, որ Մասնակիցը փաստացի ունեցել է հնարավորություն և ժամանակ Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգի հրավերով պահանջվող բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը:

Հարկ եմ համարում նշել, որ Մասնակցի համար ընթացակարգի մասնակից լինելը պարզ է դառնում ոչ թե armeps.am/ppcm համակարգի հայտեր դաշտում մասնակցի հայտերը տեսանելի լինելու հանգամանքից, այլ armeps.am համակարգում հայտերը բեռնելուց անմիջապես հետո:

Ինչ վերաբերվում է Բողոքում նշված այն դիտարկմանը, թե նման դեպքերում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ կազմակերպությունների համար խոչընդոտներ չեն ստեղծվել, այսինքն ցուցաբերվել է խտրական վերաբերմունք, ապա հայտնում եմ, որ այն չի համապատասխանում իրականությանը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նման մոտեցում երբևէ չի կիրառվել, ընդհակառակը՝ ՀՀ ՊՆ կարիքների համար գնումների կազմակերպման գործընթացներն իրականացվել և իրականացվում են խստիվ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները: Ավելին՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի՝ հրավերով սահմանված ժամկետից ուշ ներկայացրած փաստաթուղթն ընդունելն արդեն իսկ կհամարվեր օրենսդրության կոպիտ խախտում՝ մասնավորապես խտրական մոտեցում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.08.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2020/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲՔԱ-ՆԳ-2020/77 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կոշիկի ներդիրների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ.

- Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 04.08.2020թ. ժ. 11:30-ը:
- 04.08.2020թ. www.armeps.am էլեկտրոնային կայքում առաջացել են տեխնիկական խնդիրներ և հայտերի բացման հրավերով սահմանված վերջնաժամկետից հետո ընթացակարգն անմիջապես չի տեղափոխվել հայտերի գնահատման փուլ, այլ պահպանվել է հայտերի ներկայացման փուլ մինչև 05.08.2020թ.:
- Ընթացակարգը տեղափոխվել է հայտերի գնահատման փուլ 05.08.2020թ., և հայտերի բացման առաջադրանքը, որը հանձնաժողովի բացող անդամները ստանում են հայտերի ներկայացման վերջնաժամկետից անմիջապես հետո, ստացել են այդ ժամկետի հաջորդ օրը՝ 05.08.2020թ.:
- Հայտերի բացման առաջադրանքը 06.08.2020թ. դրությամբ հանձնաժողովի բացող անդամների կողմից հնարավոր չի եղել իրականացնել, քանի որ www.armeps.am էլեկտրոնային կայքում առաջացել է նաև այլ տեխնիկական խնդիր՝ հետևյալ բովանդակությամբ՝ «դուք այս գործողության համար բավարար իրավունքներ չունեք»:
- Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է 06.08.2020թ. կասեցնել նիստը և դիմել լիազոր մարմին՝ առաջացած խնդիրներին լուծում տալու համար: Ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ուսումնասիրելով խնդիրը, հայտնել է, որ հայտերի բացման և գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել: Հաշվի առնելով վերոգրյալը և քանի որ ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները տեսանելի են armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր բաժնում», ինչպես նաև դրանց ներբեռնման մասին տեղեկատվությունը առկա է համակարգում՝ առաջարկվում է գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով:

- armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր բաժնում» ներբեռնվել են «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲՐԵՆԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի հայտերը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը Ընթացակարգի հանձնաժողովին պետք է ներկայացվեր 05.08.2020թ., մինչև Երևանի ժամանակով 17:00-ն, մինչդեռ ներկայացրել է 06.08.2020թ., որը չի ընդունվել ուշացման պատճառով:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 18.08.2020թ. ներկայացված բողոքը՝ լրացմամբ և կից փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2020/77 բողոքի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը, «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի 11.09.2020թ. գրությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:**

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

***2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.***

***3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:***

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1)***իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.***

***ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,***

***բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում փվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:***

Ընթացակարգի հրավերի 4-րդ մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ***հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:***

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կոշիկի ներդիրների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ.

- Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 04.08.2020թ. ժ. 11:30-ը:
- 04.08.2020թ. www.armeps.am էլեկտրոնային կայքում առաջացել են տեխնիկական խնդիրներ, և հայտերի բացման հրավերով սահմանված վերջնաժամկետից հետո ընթացակարգն անմիջապես չի տեղափոխվել հայտերի գնահատման փուլ, այլ պահպանվել է հայտերի ներկայացման փուլ մինչև 05.08.2020թ.:
- Ընթացակարգը տեղափոխվել է հայտերի գնահատման փուլ 05.08.2020թ., և հայտերի բացման առաջադրանքը, որը հանձնաժողովի բացող անդամները ստանում են հայտերի ներկայացման վերջնաժամկետից անմիջապես հետո, ստացել են այդ ժամկետի հաջորդ օրը՝ 05.08.2020թ.:

- Հայտերի բացման առաջադրանքը 06.08.2020թ. դրությամբ հանձնաժողովի բացող անդամների կողմից հնարավոր չի եղել իրականացնել, քանի որ www.armeps.am էլեկտրոնային կայքում առաջացել է նաև այլ տեխնիկական խնդիր՝ հետևյալ բովանդակությամբ՝ «դուք այս գործողության համար բավարար իրավունքներ չունեք»:
- Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է 06.08.2020թ. կասեցնել նիստը և դիմել լիազոր մարմին՝ առաջացած խնդիրներին լուծում տալու համար: Ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ուսումնասիրելով խնդիրը, հայտնել է, որ հայտերի բացման և գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել: Հաշվի առնելով վերոգրյալը և քանի որ ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները տեսանելի են armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր բաժնում», ինչպես նաև դրանց ներբեռնման մասին տեղեկատվությունը առկա է համակարգում՝ առաջարկվում է գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով:
- armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր բաժնում» ներբեռնվել են «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԲՐԵՆԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի հայտերը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը Ընթացակարգի հանձնաժողովին պետք է ներկայացվեր 05.08.2020թ., մինչև Երևանի ժամանակով 17:00-ն, մինչդեռ ներկայացրել է 06.08.2020թ., որը չի ընդունվել ուշացման պատճառով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված բողոքով հայտնել է հետևյալը.

««ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 04/08/2020թ-ին ներկայացվել է գնման ընթացակարգին մասնակցելու էլեկտրոնային հայտ, դրան կցելով հայտի ապահովման փաստաթղթի լուսապատճենը:

Այնուհետև, նույն օրը էլեկտրոնային գնումների Armeps համակարգը տեխնիկական խափանումների պատճառով չի գործել, եղել է անհասանելի, իսկ ստուգելու համար թե, արդյոք համակարգում ներբեռնվել են «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը, թե ոչ, Ընկերությանը տեսանելի և հասանելի չի

եղել, իսկ փաստաթղթերի ներբեռնման մասին հետադարձ ծանուցումից պարզ չի եղել փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներբեռնվել է, թե ոչ:

Նման պայմաններում, մտածելով, որ հնարավոր է, որ տեղի է ունենում փաստաթղթերի ճշգրտման գործընթաց՝ «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից հայտի ապահովման փաստաթղթի բնօրինակը ներկայացվել է 06.08.2020թ.»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը վերը նշված խնդրի կապակցությամբ 07.08.2020թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է հետևյալը.

«Ընթացակարգի «Բացել հայտերը» առաջադրանքի կատարման ընթացքում առաջացած խնդրի լուծման համար պատվիրատուն 07.08.2020թ. ՊՆ/ՊՆ/02/2447-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն: Խնդիրը ներկայացվել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Վերջինս ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ հայտերի բացման և գնահատման բնականոն ընթացքը համակարգում տեխնիկապես հնարավոր չէ վերականգնել:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի մասնակիցների հայտերի փաթեթները 05/08/2020թ. տեսանելի են armeps համակարգի հայտերի հրապարակայնացման «Հայտեր» բաժնում, ինչպես նաև դրանց ներբեռնման մասին տեղեկատվությունը առկա է համակարգում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07/08/2020թ. /26-1/11834-2020թ. ելից գրությամբ պատվիրատուին առաջարկվել է հայտերի բացման և գնահատման գործընթացը շարունակել փաստաթղթային եղանակով, որոնց իրականացման ժամկետների մասին ՀՀ ֆինանսների նախարարությունը տեղեկատվություն տրամադրել չի կարող»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ մերժել է Ընկերության հայտն այն հիմքով, որ վերջինս հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը Ընթացակարգի հանձնաժողովին պետք է ներկայացներ 05.08.2020թ., մինչև Երևանի ժամանակով 17:00-ն, մինչդեռ ներկայացրել է 06.08.2020թ-ին:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերությամբ սահմանվում է, որ ***<u>հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝</u>***

***<u>հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:</u>***

Վերը նշված իրավակարգավորման իմպերատիվ պահանջն է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում նախ մասնակիցների կողմից հայտով ներկայացվի բանկային երաշխիքի ձևով ներկայացվող հայտի ապահովման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ այնուհետև դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացվի մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերով ***<u>հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված</u>*** ***<u>եղել 04.08.2020թ.</u>*** ժ. 11:30-ը:

«ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից 04.08.2020թ-ին ներկայացվել է գնման ընթացակարգին մասնակցելու էլեկտրոնային հայտ՝ դրան կցելով հայտի ապահովման փաստաթղթի լուսապատճենը:

Այնուհետև, նույն օրը էլեկտրոնային գնումների Armeps համակարգը տեխնիկական խափանումների պատճառով չի գործել, եղել է անհասանելի, իսկ ստուգելու համար թե, արդյոք համակարգում ներբեռնվել են «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը, թե ոչ, Ընկերությանը տեսանելի և հասանելի չի եղել, իսկ փաստաթղթերի ներբեռնման մասին հետադարձ ծանուցումից պարզ չի եղել փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներբեռնվել է, թե ոչ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն, «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ին ԳԲՔԱ-ՆԳ-2020/77 բողոքով ներգրավվելով որպես կողմ՝ խնդրել է գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ հայտնել՝ արդյոք «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներբեռնված

հայտերը Armeps էլեկտրոնային համակարգում 04.08.2020 - 05.08.2020թթ. ընթացքում տեսանելի եղել են, թե՞ ոչ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն 11.09.2020թ. գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներբեռնված հայտերը Armeps էլեկտրոնային համակարգում տեսանելի են եղել **05.08.2020թ-ին:**

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի 11.09.2020թ. գրությունը և գործում առկա Ընկերությանն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը՝ արձանագրում եմ, որ Armeps համակարգում առաջացած տեխնիկական խնդիրների հետևանքով Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով 04.08.2020թ. ներբեռնված հայտը տեսանելի է եղել միայն 05.08.2020թ., այսինքն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 04.08.2020թ., Ընկերությունը հնարավորություն չի ունեցել տեսնելու իր կողմից համակարգ ներբեռնված հայտը, որի պայմաններում նոր կփաստվեր, որ վերջինիս կողմից 04.08.2020թ. համակարգ հայտով ներբեռնված փաստաթղթերը՝ այդ թվում նաև հայտի ապահովումը, ներբեռնվել է բարեհաջող, թե ոչ, քանի որ նախքան Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն հայտի ապահովման բնօրինակը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ ներկայացնելը, Ընկերությունը հայտով պետք է ներկայացներ բանկային երաշխիքի ձևով ներկայացվող հայտի ապահովման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Այսպիսով՝ հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Armeps համակարգում առաջացած տեխնիկական խնդիրների հետևանքով խախտվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով ընթացակարգը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ անցկացնելու և իրականացնելու ընթացքը, որի հետևանքները չեն կարող բացասական անդրադառնալ Ընկերության համար, միաժամանակ հաշվի առնելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, ոչ խտրական հիմունքներով կազմակերպելու, նաև գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացնելու անհրաժեշտությունը՝ գտնում եմ, որ «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 18.08.2020թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/52» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և շարունակել գնման գործընթացը «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի մասնակցությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**